

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան

«_____» _____ 200__թ.

«_____» ՓԲԸ, այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս _____, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Սմարտ-Տեխ» ՍՊԸ, այսուհետ՝ «Մատակարար», ի դեմս գործադիր տնօրեն _____, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետ՝ «Կողմեր», հիմք ընդունելով ՀՀ օրենսդրությունը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Մատակարարը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում Գնորդի սեփականությանը հանձնել _____ /_____/ հատ JADE V1(կամ Jade BT, Advantage, Star) /POS տերմինալ/ և JADEPIN++ (Պին-Պադ), այսուհետ՝ «Ապրանք», իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա դիմաց:

1.2. Ապրանքի մեկ միավորի արժեքը կազմում է _____ /_____/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

1.3. Մատակարարը պարտավորվում է Ապրանքը Գնորդին հանձնել Երևան քաղաքի Արշակունյաց 41 հասցեում:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Մատակարարը պարտավորվում է՝

2.1.1. Ապրանքը Գնորդին հանձնել սույն պայմանագրով սահմանված ժամկետում

2.1.2. Գնորդին հանձնել սույն պայմանագրի 1.1. կետում նշված քանակի Ապրանք

2.1.3. Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք

2.1.4. Գնորդին հանձնել համապատասխան որակի և կոմպլեկտավորության Ապրանք

2.1.5. Ապրանքը Գնորդին հանձնել արտադրող ձեռնարկության փաթեթավորմամբ

2.1.6. Ապրանքը Գնորդին հանձնելու պահից 1 /մեկ/ տարվա ընթացքում իրականացնել Ապրանքի երաշխիքային սպասարկումը, ինչպես նաև Գնորդի աշխատակիցների հետ անցկացնել Ապրանքի շահագործման վերաբերյալ խորհրդատվություն

2.1.7. Անհատույց իրականացնել Ապրանքի տեստավորումը Գնորդին Ապրանքը հանձնելու պահից 3 /երեք/ բանկային օրվա ընթացքում

2.2. Գնորդը պարտավորվում է՝

2.2.1. Վճարել Մատակարարին մատակարարված Ապրանքի համար սույն պայմանագրով սահմանված կարգով, չափերով և ժամկետներում

2.2.2. Ընդունել Ապրանքը, եթե այն համապատասխանում է Ապրանքին ներկայացվող որակական չափանիշներին և սույն պայմանագրով սահմանված քանակին

2.2.3. Անհապաղ տեղեկացնել Մատակարարին Ապրանքի շահագործման ընթացքում հայտնաբերված թերությունների կամ անսարքությունների վերաբերյալ

2.3. Մատակարարը իրավունք ունի՝

2.3.1. Պահանջել Գնորդից վճարել մատակարարված Ապրանքի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետներում

2.3.2. Պահանջել Գնորդից ընդունել մատակարարված Ապրանքը, եթե այն ամբողջովին համապատասխանում է Ապրանքին ներկայացվող որակական չափանիշներին և փորձնական շահագործման արդյունքը եղել է դրական

2.4. Գնորդը իրավունք ունի՝

2.4.1. Պահանջել լրացնել պակաս քանակը, եթե Մատակարարը հանձնել է սույն պայմանագրի 1.1 կետով սահմանված քանակից պակաս Ապրանք

2.4.2. Պահանջել անհատույց վերացնելու Ապրանքի թերությունները, եթե Մատակարարը հանձնել է անպատշաճ որակի Ապրանք

2.4.3. Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը, եթե Մատակարարը մատակարարել է ապրանքի որակին առաջադրվող պահանջների էական խախտումներով Ապրանք

2.4.4. Պահանջել Մատակարարից Ապրանքը Գնորդին հանձնելու պահից 1 /մեկ/ տարվա ընթացքում իրականացնել Ապրանքի երաշխիքային սպասարկումը

3. Վարձատրության կարգը և չափը

3.1. Մատակարարվող Ապրանքի ընդհանուր արժեքը կազմում է _____ /_____/, ներառյալ ԱԱՀ:

3.1.1. Սույն պայմանագրի 3.1. կետով սահմանված գումարը իր մեջ ներառում է բոլոր մաքսերը, տուրքերը և տրանսպորտային ծախսերը, ինչպես նաև ԱԱՀ-ն:

3.2. Սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից 3 /երեք/ բանկային օրվա ընթացքում Գնորդը պարտավորվում է վճարել Մատակարարին կանխավճար՝ _____ / _____ / ԶԶ դրամ գումարի չափով:

3.3. Մնացած՝ _____ / _____ / ԶԶ դրամ գումարը վճարվում է սույն պայմանագրով նախատեսված ընդունման-հանձնման ակտը Կողմերի կողմից ստորագրելու պահից 3 /երեք/ բանկային օրվա ընթացքում:

4. Մատակարարման ժամկետները

4.1. Մատակարարը պարտավորվում է Ապրանքը Գնորդին հանձնել սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից 45 /քառասունհինգ/ օրվա ընթացքում:

5. Մատակարարված Ապրանքների ընդունման - հանձնման կարգը

5.1. Մատակարարված Ապրանքների վերաբերյալ Կողմերը կազմում են ընդունման-հանձնման ակտ, որը ստորագրվում է Կողմերի կողմից և կազմում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Մատակարարը վճարում է Գնորդին տուգանք՝ պայմանագրի գնի 0.1%-ի չափով:

6.2. Սույն պայմանագրի 3-րդ կետով նախատեսված վճարումները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Գնորդը վճարում է Մատակարարին տույժ՝ յուրաքանչյուր ուշացման օրվա համար վճարման ենթակա գումարի 0,1%-ի չափով:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, զործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների և ԶԶ ԿԲ որոշումները և նորմատիվ ակտերը, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Վեճերի լուծման կարգը

8.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը Կողմերի կողմից լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են ԶԶ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Այլ պայմաններ

9.1. Սույն պայմանագրի բոլոր լրացումները և փոփոխությունները Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կատարվում են գրավոր, ստորագրվում են Կողմերի կողմից և կազմում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.2. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը:

9.3. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

10. Կողմերի հասցեները և ստորագրությունները

Գ Ն Ո Ր Դ

« _____ »

Հ/Հ _____

ք. Երևան, _____

Մ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ր

«ՍՄԱՐՏ – ՏԵԽ» ՍՊԸ

Հայերերտրբանկ

Հ/Հ, 1570002947910100

ք. Երևան, Հալաբյան 22ա-17

Գործադիր տնօրեն՝
